Յայտնի է Ձերդ սրբազնութեանն որ գրոշի (ղուրուշի) կարօտ եմ, ինչ որ ունէի, Սուրբ աթոռին տվի, որ իմ ծերութեանն ինձ պահպանեն. այս եղեւ իմ նպատակն տէր Հոգասէր. յաժմ չունիմ կարողութիւն որ ճանապարհիս խարճն հոգամ. թողէք որ գամ Թիֆլիզ բարեկամներից իմ պակասութիւն հոգամ և ապա գնամ. չկարծէք թէ ես Թիֆլիզ մնալու կամք ունիմ. ոչ երբէք. միայն թէ պակասութիւնս հոգամ. ըստ որում բարեկամք շատ են և իմ ցաւիս ցաւակից կարելի է որ լինին և այլն. մտածեցէք և այնպէս տնօրինեցէք։

Ձերդ բարձր հովապետութեան խոնար ծառայ
թօփալ և փթեալ ծեր
ՍԻՄԷՕՆ ԻԲՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԶՆՈՒՆԵԱՆՑ

№ 5
6 յուլսի 1836
ի Սաղիանու ավերակն
որ ի Շամախի։

Այս թուղտս գրեցի առ կարբեցի յօհաննէս կաթուղիկոսն ի Թիֆլիզ։ Այս ոճովս մէկ թուղթ եւս գրեցի յոսէփ եպիսկոպոսին իւր թղտի պատասխանին։

ԵՐԿՐՈՐԴ ԳՐՈՒԹԻՒՆ

Բարձր սրբազան յոսէփ արք եպիսկոպոս կաւալիր և Սինոդի մեծ անդամ։

Խոնար յայտարարութիւն։

Սրբազան հայր, մի նեղանալ փթեալ թօփալիս գրութեանն. գիտեմ որ շատ գործով սրաղեալ ես, յարեւելք և յարեւմուտք Ձերդ հրամանին կախեալ կան. ում կամիք մեռուցանէք և ում կամիք կեցուցանէք. այդպէս ցոյց տաք աշխարի. սակայն երեւի թէ ջղճկան թեւ մի չէք կարում ժաժ տալ. առուծաբար որոտայք. ճնճղկաբար փոխչիք և այլն. Ե ամիս է որ ինձ տեսիր և կակուղ բարձ գրիր գլխիս տակն եւայլն։ Հինգ գիր ես գրել մինչեւ ցաժմ. ոչ մէկն չարգուանաւորեց. կարծեմ թէ երացի ես գրում, յորժամ արգնանում ես մոռանումես քո գրութիւնն. այդ չէ մարդկութեան